«ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊ»

Յոբելեանական տօնների առիթով դերասան Արմէնեանը պատրաստել է յատուկ պիէս «Սահակ և Մեսրոպ», երկու արարածով, նուիրուած այդ օրուայ հերոսներին։ Պիէսը անցեալ կիրակի կարդացուեց Դրամ. Ընկ. գրասենեակում, յատկապէս հրաւիրուած գրագէտների, հեղինակների և այլ ձեռնհաս անձերի ներկայութեամբ։ Ինչպէս տեղեկացանք, այդ պիէսի առաջին մասը վերցրած է Բաֆֆիի «Սամուէլ»-ից, թեթև փոփոխութիւններով, իսկ երկրորդ մասը նորշնչուած է Մովսէս Խորենացուց, Ղազար Փարպեցուց, Կորիւն պատմաբանից և Լէօի ուսումնասիրութիւնից և ներկայացնում է Մեսրոպի վերադարձը Միջագետքից հայոց տառերով։ Այդ տեսարանում բաւական հետաքրքրական տեղ է բռնում նաև ռէժիսեօր-հեղինակի գեղարուեստական ֆանտազիան։

«Սահակ և Մեսրոպ» պիէսը, յոբելեանական տօնների առիթով Դրամատիքական ընկ. խումբը կը ներկայացնէ իր երկրորդ հերթական ներկայացման, հոկտ. 14-ին։ Իսկ ուրբաթ, հոկտ. 11-ին, ցերեկով նոյն պիէսը կը արուի

յատկապէս հայ ուսուցիչների աշակերտների համար ձրի։

Փորձերը արդէն սկսել են և ոգևորութեամբ առաջ են տարուում։ Մասնակցում են տ. տ. Արմէնեան, Արուսեակ. Աշիէն, Արաքսեան, Գուլազեան, Ցասմիկ, պ. պ. Ա. Ցարութիւնեան, Զարիֆեան, Փափազեան, Բերոյեան և ուրիշներ։

Ցանձնարարուած են յատուկ դեկորացիաներ, զգեստներ և ռեկվիզիտ։

Պատրաստուում են յատուկ եղանակներ հայկական շարականներից վերցրած, պ. Միրզայեանի նորակազմ խմբի մասնակցութեամբ։

«ՍԱՀԱԿ ԵՒ ՄԵՍՐՈՊԸ» ԳԱԻԱՌՆԵՐՈՒՄ

Հայոց Դրամատիքական Ընկերութիւնը պայմանաւորուել է Բագուի, Երեւանի, Ալեքսանդրապոլի և Կարսի հետ, Ցարելեանական տօների առիթով, դերասանական խումբը ուղարկելու այդ քաղաքները և ներկայացնելու՝ Արմէնեանի «Սահակ և Մեսրոպ» պիէսը։

Խումբը, բաղկացած տասնեւութը հոգուց, կը մեկնի այստեղից Բագու, ուրբաթ օրը, հոկտ. 11-ին, (աշակերտական ներկայացումից յետոյ) և շաբաթ երեկոյ, հոկտ. 12-ին Բագուում ներկայացնելով «Սահակ և Մեսրոպը», իսկոյն կը վերադառնայ. իսկ ամսոյս 14-ին, նոյն պիէսը Թիֆլիսում ներկայացնելուց յետոյ, գիշերայ գնացքով խումբը կը ճանապարհուի, հինգ օրով, դէպի Երևան, Ալէքսանդրապոլ և Կարս.

Խումբին կընկերանայ խորհուրդ անդամ պ. Գ. Երիցեան, որը այդ առիթով կը բանակցի նաև Դրամ. Ընկերութեան տեղական ճիւղեր բանալու համար։